ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

«08» դեկտեմբեր 2022թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 3170-Ա
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձ Ստելլա Արշավիրի Սարգսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 5522/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրության (արձանագրությունը կցվում է)՝ ֆիզիկական անձ Ստելլա Արշավիրի Սարգսյանի (Հասցե՝ Երևան, Կենտրոն, Դեմիրճյան փ., 12-14 շենք, 37 բն. , ՀՎՀՀ՝ 40092754, ՀԾՀ՝ 8101890963) չկատարված հարկային պարտավորությունը 05.08.2022թ-ի դրությամբ կազմում է 162.837 դրամ, այդ թվում հարկ՝ 156.154 դրամ, տույժ՝ 6.683 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 09.11.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված տեղեկությունների՝ Ստելլա Արշավիրի Սարգսյանի կողմից Երևան, Կենտրոն, Դեմիրճյան փողոց 12-14 շենք, 37 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը 17.12.2021 թ-ից ամսական 780.768 ՀՀ դրամ պայմանագրային արժեքով տրամադրվել է վարձակալության Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության Դեսպանատանը:

ՀՀ հարկային օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ հարկային գործակալն ազատվում է, Օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկելու և պահելու պարտավորությունից, եթե՝ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ եկամուտ վճարողն ազատված է հարկային գործակալի պարտավորությունից:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձը հանդիսանում է եկամտային հարկ վճարող, 141-րդ հոդվածի վերոնշյալ գործարքը համարվում է եկամտային հարկով հարկման օբյեկտ: Համաձայն Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետի, վարձակալական վճարների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով, իսկ հարկային տարվա ընթացքում ստացված վարձակալական վճարների հանրագումարը 60,0 մլն. դրամը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի համար ֆիզիկական անձը հաշվարկում է լրացուցիչ եկամտային հարկ 10% դրուքաչափով:

Ֆիզիկական անձ Ստելլա Արշավիրի Սարգսյանի կողմից չի ներկայացվել նշված գործարքն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջան(ներ)ի՝ 2021 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված պարտավորությունը 05.08.2022թ-ի դրությամբ կազմում է 162.837 դրամ, այդ թվում հարկ՝ 156.154 դրամ, տույժ՝ 6.683 դրամ: Հարկերը հաշվարկվել են Օրենսգրքի 150-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված կարգով, տույժերը՝ Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով :

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

ՈՐՈՇԵՑԻ

1. ֆիզիկական անձ Ստելլա Արշավիրի Սարգսյանից գանձել 162.837 դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

05.08.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Չափման միավորը՝ դրամ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	20.04.2022թ	156.154	6.683	-	**162.837**	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի առաջատար մասնագետ Սեդա Ասատրյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: